ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության
«Պետական գույքի գույքագրման և գնահատման
գործակալություն» ՊՈԱԿ

# Ծ Ր Ա Գ Ի Ր

## ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՄՐԱՑՎԱԾ՝ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՄԻԱՎՈՐ ՄԻՆՉԵՎ ՀԻՆԳ ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄ ԳՆԱՀԱՏՎԱԾ ԱՐԺԵՔՈՎ ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ՝ ՕՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԳՏՆՎԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

2 0 1 8 թ.

## I. Ընդհանուր դրույթներ

Սույն ծրագիրն իրականացվում է Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականի մարտի 24-ի N 298-Ն որոշման պահանջներին համապատասխան՝ պետական հիմնարկներին և կազմակերպությունների ամրացված՝ մինչև հինգ միլիոն դրամ գնահատված արժեքով շարժական գույքի (այսուհետ՝ «Գույք»)՝ օտարման գործընթացում գտնվելու ժամանակահատվածում պահառության ծառայություններ մատուցելու եղանակով: Գույքի պահառությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 10-ի N 1033-Ն որոշմամբ այդ նպատակով ՊՈԱԿ-ին հատկացված՝ Երևան քաղաքի Հաղթանակի 2-րդ փողոցի 79 հասցեում գտնվող տարածքում (այսուհետ՝ «պահառության տարածք»): Ծրագրով նախատեսված աշխատանքները սկսվել են իրականացվել 2016 թվականի ապրիլի մեկից:

## II. Ծրագրի հիմնական խնդիրները

- պահառության տարածք ներկայացված Գույքի տեխնիկական վիճակի նախնական զննություն՝ Գույքը հանձնող պետական հիմնարկների (կազմակերպությունների) լիազոր ներկայացուցիչների մասնակցությամբ, կազմելով համապատասխան արձանագրություն,
- Գույքը, դրա փաստաթղթերն ու պատկանելիքները Գույքը հանձնող հիմնարկների (կազմակերպությունների) լիազոր ներկայացուցիչներից պահառությանն ընդունում՝ կազմելով հանձնման-ընդունման համապատասխան ակտ,
- Գույքի ապահով պահառություն,
- Գույքի հավանական գնորդների համար այն զննելու հնարավորությունների ապահովում,
- Գույքի, դրա փաստաթղթերի ու պատկանելիքների հանձնում Գույքի օտարման գործընթացի արդյունքներով որոշված դրա նոր սեփականատիրոջը՝ կազմելով հանձնման-ընդունման համապատասխան ակտ,
- Գույքի ու դրա շարժի վերաբերյալ տեղեկատվության միասնական վիճակագրության վարում:

## III. Ծրագրի նպատակը

Ապահովել գույքի օտարման գործընթացի առավել թափանցիկությունը և արդյունավետությունը՝ Գույքի արտաքին զննությունը մատչելի դարձնելու և օտարման գործընթացի ամբողջ տևողության ընթացքում Գույքի արժեքի նվազմանը սպառնացող ռիսկերը հնարավորինս նվազեցնելու միջոցով:

## IV. 2017 թվականի ընթացքում Ծրագրով նախատեսված աշխատանքների փաստացի ցուցանիշները՝

- պահառության է ընդունվել 67 միավոր Գույք (տրանսպորտային միջոցներ),
- Գույքի նոր սեփականատերերին է հանձնվել 393 միավոր Գույք (391 միավորը՝ տրանսպորտային միջոցներ, 2 միավորը՝ այլ շարժական գույք),
- 2018 թ. հունվարի 01-ի դրությամբ պահառության ներքո գտնվել է 33 միավոր Գույք (32 միավորը՝ տրանսպորտային միջոցներ, 1 միավորը՝ այլ շարժական գույք):

## V. 2018 թ. գոյություն ունեցող պարտավորությունների հաշվարկն ու հիմնավորումը

2017 թթ. նույնաբովանդակ Ծրագրով նախատեսված է եղել կազմակերպել միաժամանակ մինչև 150 միավոր տարատեսակ Գույքի պահառություն, ինչի համար նույն թվականներին իրականացվել էին.

- պահակատան և 40 $մ^2$ ընդհանուր մակերեսով 2 աշխատասենյակների կահավորում (գրասենյակային գույք, համակարգչային տեխնիկա, կապի միջոցներ, Գույքի փաստաթղթերի ու պատկանելիքների պահպանման մետաղյա պահարաններ և այլն),
- տրանսպորտային միջոցներ հանդիսացող Գույքի տեխնիկական սպասարկման (պահառության ընթացքում առաջացող հնարավոր անսարքությունների վերացման) համար նախատեսված գործիքների ու սարքերի ձեռքբերում,
- պահառության տարածքում էլեկտրամատակարարման, հեռախոսակապի, ինտերնետ կապի, ջրամատակարարման, կոյուղու և աղբահանության կազմակերպում,
- պահառության տարածքի մի մասի մաքրում (հարմարեցում)՝ տրանսպորտային միջոցներ հանդիսացող Գույքի կայանման համար և հետագայում այդ մասի զգալի ընդլայնում,
- պահառության տարածքի մի մասում (նախատեսված տրանսպորտային միջոցներ հանդիսացող Գույքի կայանման համար) արտաքին գիշերային լուսավորության համակարգի տեղադրում և հետագայում այդ համակարգի զգալի ընդլայնում,
- պահառության տարածքի մի մասում (նախատեսված տրանսպորտային միջոցներ հանդիսացող Գույքի կայանման համար) շուրջօրյա տեսահսկման համակարգի տեղադրում և հետագայում այդ համակարգի զգալի ընդլայնում:

2018 թ. նախատեսվում է.

- մասնակի վերանորոգել աշխատասենյակների, պահակակետի և գոյություն ունեցող սանհանգույցի ներքին պատերը,
- ավարտել երկրորդ սանհանգույցը շահագործման հանձնելու աշխատանքները,
- վերականգնել պահառության տարածքի պարիսպի բացակայող (տարիներ առաջ փլված) հատվածը,
- իրականացնել մետաղյա դռների ու դարպասների մեխանիկական մաքրման և ներկման աշխատանքները
- կատարել որոշ շենքերի կտուրների մասնակի վերականգնման աշխատանքները:

## VI. Ծրագրի ոչ ֆինանսական քանակական ցուցանիշները

Հաշվի առնելով « Հիմնարկներին և կազմակերպություններին ամրացված յուրաքանչյուր միավոր` մինչև հինգ միլիոն դրամ գնահատված արժեքով օտարման ենթակա շարժական գույքի պահառության կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի 25.04.2016 թ. N 35-Ա հրամանով հաստատված կարգի առանձնահատկությունները, ինչպես նաև մինչ այժմ պահառության ծրագրի կատարման գնատման ոչ ֆինանսկան քանակական ցուցնիշների բացակայությունը, կամ փորձնական կարգով սահմանվածների անկատարությունը, առաջարկվում է որպես այդպիսիք դիտարկել.

- ամսվա ընթացքում պահառության ընդունված գույքի միավորների ձևակերպումների քանակը (նախատեսվում է 10 միավորների չափով),
- ամսվա ընթացքում պահառությունից հանված գույքի միավորների ձևակերպումների քանակը (նախատեսվում է 10 միավորների չափով),
- ամսվա ընթացքում պահառության ներքո գտնվող գույքի միջին քանակը (նախատեսվում է 50 միավորների չափով),
- ամսվա ընթացքում պահառության ներքո գտնվող գույքի արտաքին զննություն կատարելու հնարավորություն ունեցող անձանց (հավանական գնորդների) քանակը (նախատեսվում է 150 այցելուների չափով):
-

**VII. 2018 թվականի ծախսային պարտավորությունների հաշվարկը կատարվել է հաշվի առնելով.**

- 2016-17 թթ. գույքի պահառության համար կատարված փաստացի ծախսերը,
- 2016-17 թթ. նույնաբովանդակ Ծրագրով նախատեսված որոշ ծախսերի մասամբ չկատարման (ներառյալ՝ ավարտին չհասցնելու) հանգամանքները:

**VIII. Ծրագրով նախատեսված աշխատանքները կատարելու համար մեկ տարվա հաշվարկով ծախսերը դասակարգվում են հետևյալ կերպ**

| *N* | *Հոդվածի անվանումը* | *Գումարը /հազ. ՀՀ դրամ/* | *Ներառյալ ԱԱՀ/* |
|---|---|---|---|
| 1. | Աշխատանքի վարձատրություն | 19 138.6 | |
| 2. | Էներգետիկ ծառայություններ | *679.2* | *113.2* |
| 3. | Կոմունալ (ջրամատակարարման և ջրահեռացման) ծառայություններ | *82.0* | *13.7* |
| 4. | Կապի (ներառյալ ինտերնետայինը) ծառայություններ | *211.0* | *35.2* |
| 5. | Համակարգչային ծառայություններ | *50.0* | |
| 6. | Գրասենյակային նյութեր | *108.0* | *18.0* |
| 7. | Տրանսպորտային նյութեր (ավտոմեքենայի վառելիք) | *225.0* | *37.5* |
| 8. | Կենցաղային նյութեր և պարագաներ | *602.9* | *50.2* |
| 9. | Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում | *1178.0* | *98.2* |
| 10. | Պարտադիր վճարներ /աղբահանություն/ | *229.1* | |
| 11. | Այլ ծախսեր | *78.2* | |
| | ***ԸՆԴԱՄԵՆԸ*** | ***22582.0*** | ***366.0*** |

**Ծրագրի արժեքը կազմում է՝**

| | |
|---|---|
| Ծառայության արժեք | 22582.0 հազ ՀՀ դրամ |
| Ավելացված արժեքի հարկ-ԱԱՀ | 4516.4 հազ ՀՀ դրամ |
| Հաշվանցման ենթակա ԱԱՀ | -366.0 հազ ՀՀ դրամ |
| Ընդամենը | 26732.4 հազ. ՀՀ դրամ |

1. ***Աշխատանքի վարձատրություն, ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը***

| *N* | *Պաշտոնը* | *Հաստիքը* | *Դրույքը /ՀՀ դրամ/* | *Սահմանված հավելավճարը* | *Ամբողջ դրույքը /ՀՀ դրամ/* |
|---|---|---|---|---|---|
| 1 | *Ստորաբաժանման ղեկավար* | 1 | 266500 | - | 266 500 |
| 2 | *Ստորաբաժանման ղեկավա-րի տեղակալ* | 1 | 251500 | - | 251 500 |
| 3 | *Էլեկտրագետ* | 1 | 72 752 | 36376 | 109 128 |
| 4 | *Վարորդ ավտոփականագործ* | 1 | 115 000 | - | 115 000 |
| 5 | *Պահակ* | 8 | 75 000 | 22500 | 780 000 |
| 6 | *Հավաքարար* | 1 | 72 752 | - | 72 752 |
| | ***Ընդամենը ամսեկան՝*** | **13** | **853504** | **58876** | **1 594 880** |

1) Մեկ ամսվա աշխատանքի վարձատրության ընդհանուր գումարը կազմելու է 1. 594 880 հազ. ՀՀ դրամ, իսկ 2018 թ. տարեկան ընդհանուր գումարը՝ 19, 138,560 հազ ՀՀ դրամ:
2) Աշխատանքի վարձատրության համար գումարի 2017 թ. համեմատ ոչ մեծ ավելացման անհրաժեշտությունը պայմանավորված է փաստաթղթեր ձևակերպողի պարտականությունների ավելացման հետևանքով այդ հաստիքը ստորաբաժանման ղեկավարի տեղակալի հաստիքով փոխարինելու հանգամանքով, ինչպես նաև ստորաբաժանման ղեկավարի և ղեկավարի տեղակալի աշխատանքի ռեժիմի փոփոխությամբ (շաբաթվա ընթացքում նախկինում 5 աշխատանքային օրվա փոխարեն նրանց համար սահմանվել է 6 աշխատանքային օրով շաբաթ):
3) Հավելավճարները սահմանվել են.
   - ՊՈԱԿ-ի՝ պահառությունն իրականացնող ստորաբաժանման Էլեկտրագետին՝ համաձայն «Ծանր վնասակար արտադրությունների, աշխատանքների, մասնագիտությունների և պաշտոնների ցանկերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 02.12.2010 թ. N 1698-Ն որոշման պահանջների,
   - ՊՈԱԿ-ի՝ պահառությունն իրականացնող ստորաբաժանման անընդմեջ (հերթափոխային) ռեժիմով աշխատող պահակներին՝ համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 143 հոդվածի պահանջների:

## 2. Էներգետիկ ծառայություններ

Էներգետիկ ծառայությունների ծախսերի հաշվարկը կատարվել է «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծում Հայաստանի Հանրապետության պետական մարմինների գծով բյուջետային ծախսերի առանձին տեսակների՝ ջեռուցման, վառելիքի և էլեկտրաէներգիայի ծեռքբերման ծավալների հաշվարկման հիմքում դրվող նորմաները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 28.04.2005 թ N 629-Ն որոշման N 1 հավելված՝ «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների վարչական շենքերի ջեռուցման, համար ջերմային էներգիայի տարեկան ծախսի նորմաների», հաշվի առնելով 2016-17 թթ. նույն նպատակով կատարված փաստացի ծախսերի քանակները:

1)Էլեկտրաէներգիայի ծախսերի հաշվարկ /բացառությամբ ջեռուցման/

| N | Էլեկտրաէներգիայի սպառման օբյեկտի անվանումը | Քանակը (հատ) | Հզորությունը | Շահագործման տա-րեկան ժամաքանակը | Շենքերի և շինությունների մակերեսը (մ²) | Տարեկան ծախսի նորմը (կվտ/ժ/1 մ²) | Ընդամենը տարեկան ծախսի նորմը (կվտ/ժ) | Ընդամենը Էլեկտրա-էներգիայի ծախսը (հազ. դրամ) |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | 2 աշխատասենյակ /40 քառ. մ/ և 1 պահակակետ /10 քառ. մ/ | x | x | x | 50 | 29.32 | 1466.0 | 67.7 |
| 3 | Համակարգիչների (1 հատը ներառում է տպիչ սարք) և այլ կազմտեխնիկայի ծախսը, 8-ժամյա աշխատանքային օրվա համար | 1 | x | x | x | 1100 | 1100.0 | 50.8 |
| 4 | Այլ հատուկ սարքեր (արտաքին լուսավորություն, տեսահսկման համակարգ) | | | 11978.0 | 0.0 | 0.0 | 10994.8 | 491.5 |
| 4,1 | Արտաքին լուսավորություն ցերեկային ժամերի համար | 26 | 0.1 | 879 | | | 2285.4 | 105.6 |
| 4,2 | Արտաքին լուսավորություն գիշերային ժամերի համար | 26 | 0.1 | 2339 | x | x | 6081.4 | 220.1 |
| 4,3 | Տեսահսկման համակարգի շահագործում ցերեկային ժամերին | 1 | 0.3 | 5840 | x | x | 1752.0 | 80.9 |
| 4,4 | Տեսահսկման համակարգի շահագործում գիշերային ժամերին | 1 | 0.3 | 2920 | x | x | 876.0 | 31.7 |
| 4,5 | Կենցաղային սարքեր | 2 | 0.2 | 2880 | | | 1152.0 | 53.2 |
| | **Ընդամենը** | | **x** | **x** | **x** | **x** | **17412,8** | **396.7** |

2) Ջեռուցման համար անհրաժեշտ էլեկտրաէներգիայի ծախսերի հաշվարկ

| Ջեռուցվող օբյեկտի անվանումը | Շենքի տեսակը (քար, պանելային, միաձույլ) | Շենքի ծավալը ($մ^3$) հաշվարկված արտաքին չափերով | այդ թվում զբաղեցրած տարածքի ծավալը ($մ^3$) | Ջերմային էներգիայի տարեկան ծախսի նորմը կվտ/ժ 1 $մ^3$ ծավալի համար | Ընդամենը տարեկան ծախսի նորմը (կվտ/ժ) | Ընդամենը ջեռուցման համար անհրաժեշտ էլեկտրաէներ-գիայի ծախսը (հազ. դրամ) |
|---|---|---|---|---|---|---|
| 2 աշխատասենյակ /40 քառ.մ/, 1 պահակակետ /10 քառ.մ/ 3 մ բարձրությամբ | քար | | 150 | 40.8 | 6120.0 | 282.7 |
| **Ընդամենը** | **x** | **x** | **x** | **x** | **6120.0** | **282.7** |

***Ընդամենը՝ էլեկտրաէներգիայի ծախս՝ 679.2 հազ. ՀՀ դրամ***

***3. Կոմունալ (ջրամատակարարման և ջրահեռացման) ծառայություններ.***

1) Աշխատանքային օրերի համար /ստորաբաժանման աշխատակիցներ, Գույքը հանձնող անձիք, ՊՈԱԿ-ի գնահատման բաժնի աշխատակիցներ, Գույքի հավանական գնորդներ և այլն/ 45մարդ x 250 օր = 11250 մարդ օր x 30 լիտր /մեկ մարդու համար/ x 0.180 դրամ = 60.8 հազ ՀՀ դրամ

2) Ոչ աշխատանքային օրերի համար /ստորաբաժանման աշխատակիցներ/ 10 մարդ x 115 օր = 1150 մարդ օր x 30 լիտր /մեկ մարդու համար/ x 0.180 դրամ = 6.2 հազ ՀՀ դրամ

3 ) Տնտեսական կարիքների համար 15.0 հազ ՀՀ դրամ

***Ընդամենը կոմունալ (ջրամատակարարման և ջրահեռացման) ծախս՝ 82.0 հազ ՀՀ դրամ:***

***4. Կապի (ներառյալ ինտերնետայինը) ծառայություններ համաձայն պայմանագրերի***

1) Հեռախոսակապ՝ 1 հեռախոսահամար x 2000 ՀՀ դրամ x 12 ամիս = 24.0 հազ ՀՀ դրամ /մեկ հեռախոսի համար սահմանված հաստատուն ծախս/ +1000 ՀՀ դրամ

2) Ինտերնետային կապ՝ 1 գիծ x 15500 ՀՀ դրամ x 12 ամիս = 186.0 հազ. ՀՀ դրամ /տեսահսկման համակարգի համար/

***Ընդամենը կապի (ներառյալ ինտերնետայինը) ծառայությունների ծախս՝ 211.0 հազ.ՀՀ դրամ***

***5. Համակարգչային ծառայություններ***

Համակարգչի սպասարկում, տպող սարքի քարթրիջի լիցքավորում և այլն)

***Ընդամենը համակարգչային ծառայությունների ծախս՝ 50.0 հազ. ՀՀ դրամ***

6. *Գրասենյակային նյութեր և պարագաներ*

7.

| Հ Հ | *Ապրանքների անվանում* | *Չափի միավոր* | *Գին* | *Քանակ* | *Գումար /ՀՀ դրամ/* |
|---|---|---|---|---|---|
| 1 | Թուղթ A4 | տուփ | 2100 | 20 | 42000 |
| 2 | Թղթապանակ պոլիէթիլենային բարակ /արագակար/ | հատ | 180 | 200 | 36000 |
| 3 | Նշումների կպչուն թուղթ / 5 գույն/ | հատ | 400 | 3 | 1200 |
| 4 | Գրիչ /կապույտ,կարմիր,սև /գելային/ | հատ | 250 | 20 | 5000 |
| 5 | Մկրատ | հատ | 250 | 1 | 250 |
| 6 | Մատիտ | հատ | 100 | 2 | 200 |
| 7 | Ռետին | հատ | 100 | 2 | 200 |
| 8 | Ֆայլ (40 micron հաստությամբ) | հատ | 15 | 1000 | 15000 |
| 9 | Ընդգծիչ | հատ | 250 | 4 | 1000 |
| 10 | Նոթատետր | հատ | 500 | 1 | 500 |
| 11 | Ջնջիչ | հատ | 250 | 3 | 750 |
| 12 | Ասեղ N 10 | տուփ | 300 | 5 | 1500 |
| 13 | Սոսինձ 21գր | հատ | 220 | 3 | 660 |
| 14 | Ամրակ /փոքր/ | տուփ | 200 | 7 | 1400 |
| 15 | Սեղմակ /միջին/ | հատ | 65 | 5 | 325 |
| 16 | Սեղմակ /փոքր/ | հատ | 45 | 5 | 225 |
| 17 | Սկոչ մեծ | հատ | 100 | 4 | 400 |
| 18 | Շտամպի սարքի բարձիկ | հատ | 500 | 1 | 500 |
| 19 | Շտամպի թանաք | հատ | 150 | 3 | 450 |
| 20 | Գրասենյակային դանակ | հատ | 120 | 1 | 120 |
| | **Ընդամենը** | | | | **107 680** |

***Ընդամենը գրասենյակային նյութերի ծախս՝ 108.0 հազ ՀՀ դրամ***

8. ***Տրանսպորտային նյութեր (ավտոմեքենայի վառելիք)***

Վառելիքի միջին օրական ծախս 2լիտր

2x250օր x450դրամ =225.0 ՀՀ դրամ

***Ընդամենը տրանսպորտային նյութերի (ավտոմեքենայի վառելիք) ծախս՝ 225.0 հազ ՀՀ դրամ /***

9. ***Կենցաղային նյութեր և պարագաներ***

Տարածքում մաքրության աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ նյութեր, պարագաներ, շենքերում ու պահառության տարածքում կատարվելիք ընթացիկ (ներառյալ՝ վերանորոգման) աշխատանքների և վթարների ու անսարքությունների վերացման համար

անհրաժեշտ նյութեր, պարագաներ, շենքերի ու պահառության տարածքի լուսավորությունն ապահովելու համար անհրաժեշտ պարագաներ և այլն:

Հաշվարկը կատարվել է հաշվի առնելով 2016-17 թթ. փաստացի կատարված ծախսը:

| ՀՀ | Ապրանքի անվանումը | Չափի միավորը | Գինը | Քանակը | Գումարը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| I. | Տնտեսական ապրանքներ | | | | |
| 1 | Ավել | հատ | 900 | 10 | 9 000 |
| 2 | Ցախավել | հատ | 2 000 | 14 | 28 000 |
| 3 | Հատակ լվանալու ձող | հատ | 1 000 | 2 | 2 000 |
| 4 | Գոգաթիակ | հատ | 250 | 5 | 1 250 |
| 5 | Կահույք մաքրելու լաթ | հատ | 500 | 18 | 9 000 |
| 6 | Հատակ մաքրելու լաթ | հատ | 500 | 9 | 4 500 |
| 7 | Զուգարանի խոզանակ տակդիրով | հատ | 1 000 | 2 | 2 000 |
| 8 | Կենցաղային խոզանակ | հատ | 1 050 | 1 | 1 050 |
| 9 | Ապակիներ մաքրելու խոզանակ | հատ | 950 | 3 | 2 850 |
| 10 | Դույլ ցինկապատ 10լ | հատ | 1 100 | 9 | 9 900 |
| 11 | Մաքրող նյութեր /ռախշա/ | հատ | 250 | 9 | 2 250 |
| 12 | Լվացող նյութեր /ունիվերսալ/ | հատ | 900 | 8 | 7 200 |
| 13 | Սանհանգույցի ախտահանող հեղուկ /ժավել/ | լ | 200 | 10 | 2 000 |
| 14 | Լվացքի փոշի /ձեռքով լվանալու համար/ | հատ | 400 | 10 | 4 000 |
| 15 | Զուգարանների մաքրման նութ /բադիկ/ | հատ | 1 000 | 10 | 10 000 |
| 16 | Աղբարկղ թիթեղյա | հատ | 3 600 | 5 | 18 000 |
| 17 | Ապակի մաքրելու միջոց | հատ | 250 | 7 | 1 750 |
| 18 | Ձեռքի հեղուկ օճառ /5 լ/ | հատ | 1 350 | 2 | 2 700 |
| 19 | Զուգարանի թուղթ ռուլոնով | հատ | 165 | 95 | 16 675 |
| 20 | Դրոշ | հատ | 6 500 | 2 | 13 000 |
| | Ընդամենը | | | | 146 125 |
| II. | Շինանյութ | | | | |
| 1 | Բահ | հատ | 2 500 | 3 | 7 500 |
| 2 | Բահ /սուր ծայրով/ | հատ | 2 500 | 3 | 7 500 |
| 3 | Կողպեք | հատ | 1 500 | 5 | 7 500 |
| 4 | Ծորակի միջուկ | հատ | 1 500 | 2 | 3 000 |
| 5 | Ճկախողովակ /ջրի միացումների համար/ | հատ | 1 200 | 1 | 1 200 |
| 6 | Մեխ /տարբեր չափերի/ | կգ | 700 | 5 | 3 500 |
| 7 | Կիր | կգ | 500 | 20 | 10 000 |
| 8 | Գառմոշկա | հատ | 2 500 | 2 | 5 000 |
| 9 | Պալլավոկ | հատ | 2 500 | 2 | 5 000 |
| 10 | Ջրի սիֆոն | հատ | 1 000 | 2 | 2 000 |
| 11 | Զուգարանի կնոպկա | հատ | 1 500 | 2 | 3 000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 12 | Զուգարանի նստատեղ | հատ | 2 200 | 2 | 4 400 |
| 13 | Ռետինե անցումներ և անկյունակներ | հատ | 250 | 4 | 1 000 |
| 14 | Սիլիկոն | հատ | 900 | 5 | 4 500 |
| 15 | Ունիվերսալ սոսինձ | հատ | 1 600 | 2 | 3 200 |
| 16 | Վրձին | հատ | 2 000 | 2 | 4 000 |
| 17 | Ներկագլանակ | հատ | 3 500 | 2 | 7 000 |
| 18 | Հարթաթուղթ | մ | 1 500 | 2 | 3 000 |
| | ***Ընդամենը*** | | | | ***82 300*** |
| ***III.*** | ***Պահառվող գույքի պահպանության համար*** | | | | |
| 1 | Սկոճ | հատ | 400 | 20 | 8 000 |
| 2 | Սկոճ թղթե | հատ | 500 | 35 | 17 500 |
| 3 | Թել վրանի | հատ | 500 | 5 | 2 500 |
| 4 | Վրան /4*4/ | հատ | 6 000 | 10 | 60 000 |
| 5 | Պոլիէթիլենային թաղանթ | մ | 250 | 90 | 22 500 |
| 6 | Ռետինե խողովակ /50մ/ | հատ | 20 000 | 2 | 40 000 |
| 7 | Բանալիի կախիչ | հատ | 150 | 50 | 7 500 |
| 8 | Կապարակնիք | դրամ | | | 30 000 |
| | ***Ընդամենը*** | | | | ***188 000*** |
| ***IV.*** | ***Էլեկտրամատակարարման և լուսավորության համակարգեր*** | | | | |
| 1 | Վարդակ, երկբևեռանի | հատ | 700 | 6 | 4 200 |
| 2 | Անջատիչ | հատ | 700 | 4 | 2 800 |
| 3 | Հալոգենային լամպ 400Վտ | հատ | 4 000 | 10 | 40 000 |
| 4 | Էկոնոմ լամպ /65ՎՏ/ | հատ | 1 200 | 25 | 30 000 |
| 5 | Էկոնոմ լամպ /95ՎՏ/ | հատ | 1 500 | 25 | 37 500 |
| 6 | Կոթառ կեռամիկական | հատ | 1 000 | 15 | 15 000 |
| 7 | Մալուխ պղնձե 2*2,5 | մ | 300 | 190 | 57 000 |
| | ***Ընդամենը*** | | | | ***186 500*** |

***Ընդամենը կենցաղային նյութերի և պարագաների ծախս՝ 602.9 հազ. ՀՀ դրամ։***

## 9.Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում

Պահառության տարածքը հիմնականում պարիսպապատված կամ ցանկապատված է, սակայն երկբետոնյա սալերից ժամանակին կառուցված պարիսպի մի հատվածը մինչև վերջերս գտնվում էր անմխիթար (նախավթարային) վիճակում և ուներ ցածր բարձրություն՝ դրա վերին հատվածը մասամբ վնասված լինելու պատճառով։ Պարիսպի այդ հատվածով անհայտ անձիք 2 անգամ ներխուժել էին տարածք և կատարել պահառվող գույքի առանձին մասերի գողություններ։ 2017 թ. վերջին պարիսպի այդ հատվածի մի մասն ամբողջությամբ փլուզվեց և դրա տեղը ժամանակավորապես տեղադրված մետաղյա ցանցը չի կարող ապահովել պահառության տարածքի անվտանգությունը, քանի որ գիշերային լուսավորության և տեսահսկման համակարգը հիմնականում տեղադրված է տրանսպորտային միջոցների կայանման շուրջ 500 մ2 ընդհանուր մակերեսով հատվածում և չի ապահովում ավելի քան 16,0 հազ. մ2 ընդհանուր մակերեսով պահառության ամբողջ տարածքի հսկողությունը։ Ելնելով այդ հանգամանքներից անհրաժեշտություն է առաջացել վերականգնել քանդված պարիսպի շուրջ 80 մ2 ընդհանուր մակերեսով հատվածը

| ՀՀ | Հոդված | Չափի միավորը | Գինը | Քանակը | Գումարը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Շինարարական քար /տուֆ/ | հատ | 220 | 1000 | 220,000 |
| 2 | Ավազ | պարկ /25կգ/ | 400 | 250 | 100 000 |
| 3 | Ավազաքար | դրամ | 50 000 | 1 | 50 000 |
| 4 | Ցեմենտ | պարկ | 3 100 | 80 | 248 000 |
| 5 | Արմատուրա 10÷12 մմ /ձողեր/ | կգ | 400 | 300 | 120 000 |
| 6 | Խամուտ /մետաղական բազման-գամյա օգտագործման ամրակներ/ | հատ | 250 | 120 | 30 000 |
| | **Ընդամենը** | | | | **768000** |
| 7 | *Աշխատանքի վարձատրություն* | | | | **285 000** |
| | ԱՄԲՈՂՋԸ | | | | **1 053 000** |

*Երկար ժամանակ շահագործման արդյունքում առաջացել է մուտքի դարպասի ներկման անհրաժեշտություն, ինչպես նաև կատարվել է տարածքում գտնվող երկաթյա դռների /3 հատ/ վերանորոգման և զոդման աշխատանքներ, որոնց հետևանքով առաջացել է դրանց ներկման անհրաժեշտությունը*

| ***II.*** | **Մետաղյա դարպասների և դռների ներկում** | **Չափի միավորը** | **Գինը** | **Քանակը** | **Գումարը /ՀՀ դրամ/** |
|---|---|---|---|---|---|
| 1 | *Յուղաներկ* | *կգ* | *2000* | *15* | *30 000* |
| 2 | *Լուծիչ* | *լ* | *500* | *6* | *3 000* |
| | **Ընդամենը** | | | | **33 000** |

*Պահակակետի /20քառ.մ./ և աշխատասենյակի /40քառ. մ/ պատերի վրա առաջացել են ճաքերի, ցեփերի և բորբոսապատված է որոշ հատվածների, ինչպես նաև հոսանքի լարերի. վարդակների և անջատիչնեչի տեղափոխման և փոխարինման հետևանքով առաջացել են հետքեր, ելնելով վերոգրյալից անհրաժեշտ է կատարել ներքին հարդարման և ներկման աշխատանքներ*

| ***III.*** | **Սանհանգույցի ,աշխատասենյակի և պահակակետի պատերի նորոգում** | **Չափի միավորը** | **Գինը** | **Քանակը** | **Գումարը /ՀՀ դրամ/** |
|---|---|---|---|---|---|
| 1 | *Ծեփամածիկ* | *հատ* | *4000* | *6* | *32 000* |
| 2 | *Լատեքս* | *լ* | *1000* | *60* | *60 000* |
| | **Ընդամենը** | | | | **92 000** |

***Ընդամենը շենքերի և կառույցների ընթացիկ նորոգման ծախս՝ 1178.0 հազ. ՀՀ դրամ:***

*10. Պարտադիր վճարներ /աղբահանություն/*

Աղբահանության վճարի հաշվարկը կատարվել է «Աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու 23.12.2011 թ. N 360-Ն որոշման 3-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված ամսական դրույքաչափով /ամսեկան 8 դրամ՝ տարածքի 1 մ$^2$ մակերեսի համար/, ինչը պահառության տարածքի 2386.5 մ$^2$ մակերեսի համար ամսեկան կկազմի 19092 ՀՀ դրամ

***Ընդամենը պարտադիր վճարների /աղբահանություն/ ծախս՝ 229.1 հազ. ՀՀ դրամ:***

*11. Այլ ծախսեր*

Այլ ծախսերի համար նախատեսվող գումարըը հաշվարկվել է ընդհանուր ծախսերի 0.35% չափով:

***Այլ ծախսերը կազմում են 78.2 հազ. ՀՀ դրամ:***

«Պետական գույքի գույքագրման
և գնահատման գործակալություն»
ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրեն՝ Ս. Ստեփանյան